ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| Կազմակերպության տվյալներ<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>indproc@gmail.comasnakcaym |
| | |
| Հետազոտության թեմա/վերնագիր<br>• Հետազոտության թեմա | Ազգային տոներ.<br>Համբարձման տոնը.<br>Ինչպես պահպանենք ազգային տոները և փոխանցենք սերունդներին: |
| | |
| Ուսուցչի տվյալներ<br>• Ա.Ա.Հ.<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Արևիկ Հարությունյան Նիկոլի.<br>Պատմաբան.<br><br>Հայոց և Համաշխարհային պատմություն,<br>Հասարակագիտություն և Հեպ.<br>5-11-րդ դասարաններ. |

| Ուսումնական հաստատության տվյալներ<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնք Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց.<br><br>zaridproc77@mail.ru |
|---|---|

Համբարձման տոնի միջոցառման սցենարը կազմելու համար մեծ աշխատանք ենք կատարել:Յուրաքանչյուր աշակերտի հանձնարարեցի գտնել մեծահասակ տատիկների, որոնք կհիշեն տոնի արարողակարգի
հերթականությունը, պարեղանակները, խաղիկները,օրհնանքներն ու մաղթանքները: Հավաքված նյութերի հիման վրա և մեր երևակայության
ու ստեղծագործական մտքի շնորհիվ գրել եմ սցենարը, երգերի բառերը,
օրհնանքներն ու մաղթանքները:
Տոնը սկսում ենք դեպի կանաչ դաշտ ծաղկաքաղով, որն ուղեկցվում է Հովհ. Թումանյանի Անուշ պոեմի համբարձման երգով ու հեղինակի խոսքերով: Հավաքած ծաղիկներով փնջեր կապելու ընթացքը ուղեկցվում
է տոնի խորհուրդը՝ հեթանոս հայերից մինչև Հայոց Առաքելական եկեղե-
ցու՝ քրիստոնեության հետ կապելու բացատրությունը:
Ծաղկամերը և ծաղկեփնջերը պատրաստելուց հետո, աղջիկները պատ- րաստվում են գնալ ջուր գողանալու 7 աղբյուրից: Երեկոյան ջրով և իրենց
նշաններով լի փարչը դնում են բարձր մի տեղ, աստղերի տակ, ներկայաց-
նելով գիշերվա խորհուրդը, երբ լեզու է առնում ողջ բնությունը ևպատմում
իր բուժիչ հատկությունների մասին: Առավոտյան ցողոտ ու շաղոտ

բնութ –
յունը բուժում է բոբիկ ոտքերը:
Առավոտյան երգերով ու պարով տանտիրուհիներին են նվիրում ծաղկե-
փնջերը և հավաքված ուտեստները ծնողները եփում են, մինչև աղջիկները
հանում են վիճակները: Կատակներով, ուրախ երգ ու պարով ավարտում
են Համբարձման տոնը իրեց հետ տանելով վիճակի մաղթանքներն ու օրհ-
նանքները:

| | |
|---|---|
| Նպատակը եւ հետազոտական հարցը | Հայոց ազգայինն ու քրիստոնեականը սովորենք,պահպանենք և փոխանցենք մեր սերունդներին:<br>Ինչպես պահպանել ազգային տոները: |
| | |
| Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար | 6-րդ դասարան անցնում են հայոց եկեղեցու տոները և 8- րդ /պարային խումբ/ դասարանների աշակերտների  հետ, կատարված հետազոտու թյունը մեծ հետաքրքրություն առաջացրեց: Սովորեցին, կկիրառեն կյանքում և կփոխանցեն հաջորդներին; |

| | |
|---|---|
| Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը | Ազգային մշակույթն ու քրիստոնեական տոներն ու ծեսերը չաղավաղելով պահպանելու կարողունակությունը: |
| | |
| Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին | Մշակույթ- արհեստ և արվեստ թեմայի: |

| | |
|---|---|
| Գրականության ակնարկ<br>• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: | Հովհ. Թումանյան Անուշ պոեմից:<br>Հայոց պատմություն 6-րդ դասարան .Ար-<br>տաշես 1- ի բարեփոխումները՝ տոմարի կարգավորումը:<br>Հեպ 6-րդ դասարան- Հայոց եկեղեցու տոները:<br>Հրանուշ Խառատյան Ազգային տոներ: |

| | |
|---|---|
| Պարտադիր է կատարել հղում աղբյուրին | Համագյուղացի տատիկներ- Մարան Մաթե-<br>վոսյան 73 տարեկան, Սաթիկ Ավետիսյան 96 տ .ուսուցչուհի,Քնարիկ Թարվերդյան 92տ:<br><br>Այս տատիկները բնիկ զառեցիներ են: |
| | |
| Օգտագործված մեթոդները, գործիքները | Հարց ու պատասխան, զրույց, պատմողական… |
| | |
| Իրականացման ժամանակահատվածը | Երկու<br>օր |
| | |
| Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/ | 6-րդ դաս.8-րդ դաս. 1-ին դաս երկու աղջիկներ :<br>17 հոգի, աղջիկներ: |
| | |

Այս միջոցաումը շատ պայծառ է ու գունագեղ: Կատակներով, երգ ու պարով ,օրհնանքներով և մաղթանքներով ուղեկցվող գործողությունները նպաստում են ընկերասիրության, կոլեկտիվով աշխատելու,
աշխատասիրության ձգտելու, վերջնարդյունքին հասնելու, հայրենիքի և ընկերների նկատմամբ սիրո ու հարգանքի դրսեվորման
կարողուրակություններին:
Յու-թուբ-ում տեղադրված միջոցառումը արդեն 966 դիտում ունի, սա նշանակում է, որ հետաքրքրությունը ազգային և եկեղեցական տոների
նկատմամբ մեծ է, մասնակցությունն էլ հաճելի:Հաջորդ տարի արդեն միջոցառումը կազմակերպել էին 9- րդ դասարանի աղջիկները 6-րդ դաս. աղջիկների հետ:
2022թ-ին Չառ գյուղի հարևանությամբ Կոտայք և,Ակունք գյուղերի, Աբովյան քաղաքի 10-րդ դպրոցի աշակերտները կազմակերպել էին Համբարձման տոնը, համարյա նույն պարային հագուստներով: Ուրեմն կա հույս, որ մեր ազգային և հոգևոր տոները մեծ տարածում կգտնեն ժողովրդի մեջ և կփրկվեն
մոռացությունից:
Ինչպես Տրնդեզը,Ծաղկաղարդը,Վարդավառը, այնպես էլ Համբարձման տոնը սիրված է ժողովրդի կողմից և մեր՝ ուսուցիչներիս ջանքերով, պետք է պահպանվի, հղկվի, համալրվի և փոխանցվի սերունդներին:

Հավելվածներ

| | |
|---|---|
| Հաշվետվության կցված նյութեր<br><br>• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)<br>• Նկարներ<br>• Արդյունքներ | https://youtu.be/fDJPDGAboTI |